քին եւ Տայքին, բայց չէր կարողացել նուաճել. նրա լիազօրներն ո՛չ կարողանում էին հարկ հաւաքել, ո՛չ էլ երկրի խաղաղութիւնը պահպանել. Ասի (ապստամբ) բէգերը յաճախ խուժում էին շրջակայ գաւառները, կալուածատէրերը ո՛չ միայն չէին վճարում խոստացուած եւ որոշուած հարկերը, այլ եւ կողոպտում: Լալան եկել էր կործանելու այն բոլոր բերդերը, ամրոցները եւ որջերը, որոնք Ասիների ապաստարաններն էին: Լալան ոչ միայն կործանեց դարեւոր շինութիւնները, արուեստի արտադրութիւնները, այլ նա կոտորեց հայ — քրիստոնեաներին. ապատուեցին միայն Իսլամը դաւանողները, այն էլ 20 %ը ժողովրդի:

Բաբերդը, Սպերը, Կիսկիմը, Օլթին կործանելուց յետոյ, անցաւ Կուրի հովտով Արդահան, Ախալցխա, Գորի, Թիֆլիս եւ Սիոնի ու Անչիսխաթի տաճարների գլխին մահիկ-աստղ կանգնեցնելով, գնաց Գանձակ, Շաքի, Շիրվան ու Բաքի:

Որքան էլ կործանուած ու փշրուած են Իսպիրի բերդերն ու ամրոցները, դղեակներն ու տաճարները, բայց նրանց աւերակները դեռ քառասուն դար յետոյ էլ խուզարկուին պատմելու են իրենց անցեալը, որը միայն շինարարութեամբ է սահել մինչեւ Օսմանեանների իշխանութեան տակ ընկճուելն ու կործանուելը: (Յովհան Ծարեցի եւ Հնուտի Յայսմաւուրք): Թէեւ Լալա Փաշան կոր-